# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**<<_16_>> __ապրիլի__ 2013թվականի N_36_-Ա**

**<<ԳՅՈՒՄՐՈՒ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Գ.ՆԺԴԵՀ ՓՈՂՈՑ N 5/13 ՀԱՍՑԵՈՎ 0,61726ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Գ.ՆԺԴԵՀ ՓՈՂՈՑ N 3/7 ՀԱՍՑԵՈՎ 0,35342ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 89-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թվականի դեկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 21-ի N557 և 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> 1572-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2013թվականի մարտի 26-ի N 02.2/1330-13 և N 01/06.1/1346-13 գրությունները՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Ընդունել <<Գյումրու մոր և մանկան Ավստրիական հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության սեփականությունը հանդիսացող (վկայական N 29082012-08-0195) Գյումրի քաղաքի Գ.Նժդեհ փողոց N 5/13 հասցեով 0,61726հա մակերեսով հողամասի նվիրատվությունը Գյումրու համայնքին:
2. Գյումրի քաղաքի Գ.Նժդեհ փողոց N 5/13 հասցեով 0,61726հա մակերեսով հողամասի նկատմամբ Գյումրու համայնքի սեփականության իրավունքը գրանցելուց հետո հողամասը նվիրել Հայաստանի Հանրապետությանը:
3. Գյումրու համայնքի սեփականությունը հանդիսացող (վկայական N 31082012-08-0143) Գյումրի քաղաքի Գ.Նժդեհ փողոց N 3/7 հասցեով 0,35342հա մակերեսով հողամասը նվիրել Հայաստանի Հանրապետությանը:
4. Նվիրատվությունների հետ կապված պայմանագրերի նոտարական վավերացման և պետական գրանցման ծախսերը կատարել հողօգտագործողների միջոցների հաշվին:

**Կողմ (17)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (1)**

**Ա.Ադամյան**_____ **Լ.Բարսեղյան** _____

**Գ.Ադամյան**_____

**Ա.Բաղեյան**_____

**Ա.Բաղրամյան**_____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ.Խաչատրյան _____

Հ.Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ.Հունանյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է.Մկրտչյան _____

Ե.Պողոսյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

Տ.Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ